

ՈՉ ՄԻԱՅՆ ԱՊՐԻԼ 24-ԻՆ

Posted on April 24, 2012 by Keghart



Category: [Opinions](#)



Խաչատուր Ի. Փիլիկեան, 24 Ապրիլ 2012

Առաւօտ լուսո՛յ, Արեգա՛կն արդա՛ր:
Չարթնելով իսկոյն
24 Ապրիլը ապրիլ կը սկսիմ՝
Պատմութեան երթի անարդար յուշը
Արդար պայքարի հողին ցանելով.
Եւ այս՝ ամէն օր:

Հերկելու հերթին հողը այդ պարարտ
Ամորձիքներս եթէ զիս լքեն...
Կեանքի կորովս հայազգալաբար
Հերկի նոր արօր պիտ' յղիանայ.
Միայն թէ յուշը Ապրիլի՛ ապրիմ:

Խաչատուր Ի. Փիլիկեան, 24 Ապրիլ 2012

Առաւօտ լուսո՛յ, Արեգա՛կն արդա՛ր:
Չարթնելով իսկոյն
24 Ապրիլը ապրիլ կը սկսիմ՝
Պատմութեան երթի անարդար յուշը
Արդար պայքարի հողին ցանելով.
Եւ այս՝ ամէն օր:

Հերկելու հերթին հողը այդ պարարտ
Ամորձիքներս եթէ զիս լքեն...
Կեանքի կորովս հայազգալաբար
Հերկի նոր արօր պիտ' յղիանայ.
Միայն թէ յուշը Ապրիլի՛ ապրիմ:

Բայց պատահեցաւ եւ վախըն ինձ պատեց
Յոռի տեսիլքովն յուսահատ երթի:
Պոռթկացի իսկոյն...
Ահն ալ զիս մղեց անվախ ընթանալ՝
Կեանքի յուսադիր նոր ուղիներով,
Թեկուզ եւ յաճախ լոկ ընկրկելով:
Ու եղաւ այդպէս...

Ազատն արուեստի շունչը ինձ պատեց,
Չով յագուրդ տալով
Ճանաչողութեան ծարաւիս անշէջ:
Արուեստագետ եմ՝ Հայ, յանդուքն, անյոռի
Չորիի աշխատուժով բռնկուած անսանձ ձի,
Գիտագգաց արուեստիս կեղեւներէն սնանող,
Մրգահաւաքս լրիւ հանրութեան գիրկը նետող
Միջազգայնասեր եմ՝ խրոխտ ու անշէղ,
Ազգային տունը ընդմիշտ պահպանող:

Կեանքի համալսարանի անկուռք տաճարին
Սարկաւաքն եմ՝ դպիր, ընդմիշտ աշակերտ,
Կերպոխիչ կեանքի իմաստասիրութեան
Վարդապետ բանուոր, անգամ՝ մարտնչող,
Յորդացող մտքի սրտձայն տակառով
Թմբկահար եմ երթի՝ բաց քաղաքականութեան:

Մայրական խղճով հարբեցած հայ եմ՝
Պատերազմամով կոյր-բուճ ուժերու
Չար-բաց աչքերուն
Լոյսը խափանող խաւար տենչացող:

Բիրտ, քոզմոփոլիթ մարդատեացներու
Առաւել շահու անիշխանութեան,
Շահատակութեան մանկլավիկներու ահաբեկչութեան,
Կեղծ ազատականութեան
Յայտնի ու անյայտ պնակալէզներու
Հին-Նոր աստուածները յաւետ նախատող,
Անխիղճ կուռքերնին անխիղճ պարսաւող
Սփիւռքահայ եմ՝
Ռամկասեր կերտող ընկերվարութեան:

Հազար փառք կանչող
Մատեան յառաջդիմութեան երգիչ եմ՝ Գողթան,
Նոր դպրութեանս՝ սիրահարփած Տորք՝
Անսիրտ հասարակարգի սրտացաւ հսկայ,
Վահագնաճնունդ Դաւիթ Սասունցի,
Թոնդրակեան Սմբատ, Արովեանական սրտով Աղասի,
Արծիւ Անդրանիկ, Փառամագ, Ռոստոմ,
Անգին Շահումեան,
Մաշտոցեան Գիրով, Նարեկեան Ձայնով

Տիր՝ տասնամեծար Նալպանտեանական,
Խաղաղութեան Աստծոյ ծուխը ծխանող
Մունետիկ Մանուկ,
Խորին Նոր խորհրդով Կոմիտասական
Ժիրագանգ ղողանջ,
Առաւել սիրոյ արդար հասարակարգի
Յարալէզներու շուն,
Քուչակեան խանդով խինդով սրբացած
Խաչատրեանական գեղօնի երգիչ,
Որմնադիր կերտիչ՝ Չարենցեան յոյսի
Չուարթ լոյս կեանքի:

Հայ ժողովուրդի մտքին, բազուկին
Հաւատ չընծայող,
Դեպ՝ ազատ կեանքի
Ժողովուրդներու երթի խարխափը
Լոկ անկում տեսող,
Յուսահատութեան, յոռետեսութեան,
Կոյր ուժի հլու,
Մեղկ նահատակութեան կոչին հնազանդ,
Կանաչ արեւով կեանքերնին այրող,
Ընկնող թէ կանգնող
Հայորդիներուն, հայուհիներուն՝
Հազար գգուանքով ուշքի վերյարնող
Հայ եմ՝ լաւատես,
Լոյս գուարթ շնջող:

